
ԽՈՒՄԲ 6

136 հարց

DT կարգեր · տեսական հարցաշար

1. **Երթեւեկել արգելվում է**




1. Կարմիր եւ սպիտակ ավտոմոբիլներին:
2. **Կապույտ, կանաչ եւ սպիտակ ավտոմոբիլներին:**
3. Սպիտակ, կապույտ եւ դեղին ավտոմոբիլներին:

Պատ.՝ 2

---

2. **Վարորդներից ո՞վ իրավունք ունի երթեւեկել ուղիղ:**




1. Ավտոբուսի եւ մոտոցիկլի վարորդները
2. Թեթեւ մարդատար եւ բեռնատար ավտոմոբիլների վարորդները
3. **Թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդը**

Պատ.՝ 3

---

3. **Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդը պետք է զիջի ճանապարհը:**



1. Ավտոմոբիլի վարորդը
2. **Տրամվայի վարորդը**

Պատ.՝ 2

---


4. **Եթե կարգավորողի աջ ձեռքը պարզված է առաջ, ապա ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթեւեկությունը թույլատրվում է**

1. Ձախ կողմից՝ դեպի ձախ եւ հակառակ ուղղությամբ:
2. Աջ կողմից՝ միայն դեպի աջ:
3. **Ձախ կողմից՝ բոլոր ուղղություններով:**
4. Թիկունքից՝ միայն դեպի աջ:

Պատ.՝ 3

---

5. **Տրանսպորտային միջոցները խաչմերուկը կանցնեն հետեւյալ հերթականությամբ՝**




1. Տրամվայը եւ ավտոբուսը, թեթեւ մարդատար ավտոմոբիլը:
2. Տրամվայը, թեթեւ մարդատար ավտոմոբիլը, ավտոբուսը:
3. **Թեթեւ մարդատար ավտոմոբիլը, տրամվայը եւ ավտոբուսը:**

Պատ.՝ 3

---

6. **Ո՞ր պատասխանում են ճիշտ նշված այն տրանսպորտային միջոցները, որոնց թույլատրվում է երթեւեկել:**




1. Մոտոցիկլը
2. Բեռնատար ավտոմոբիլը
3. Ավտոբուսը
4. **Թեթեւ մարդատար ավտոմոբիլը**
5. Թեթեւ մարդատար եւ բեռնատար ավտոմոբիլները

Պատ.՝ 4

---

7. **Կարգավորողի այս ազդանշանը նշանակում է, որ երթեւեկությունը թույլատրվում է**




1. Կապույտ եւ կանաչ ավտոմոբիլներին: Արգելվում է կարմիրին, դեղինին եւ սպիտակին:
2. **Կապույտ, կարմիր եւ կանաչ ավտոմոբիլներին: Արգելվում է դեղինին եւ սպիտակին:**

Պատ.՝ 2

---

8. Ո՞ր տրանսպորտային միջոցները կարող են կատարել աջ շրջադարձ:




1. Միայն կարմիր ավտոմոբիլը
2. Բոլոր տրանսպորտային միջոցները
3. **Կարմիր եւ կանաչ ավտոմոբիլները**

Պատ.՝ 3

---

9. Երթեւեկությունը թույլատրվում է




1. Ուղիղ:
2. **Դեպի աջ՝ առաջին անցումով:**
3. Դեպի աջ՝ երկրորդ անցումով:
4. Դեպի աջ՝ առաջին եւ երկրորդ անցումներով:

Պատ.՝ 2

---

10. **Երթեւեկությունը թույլատրվում է**




1. **Դեպի աջ՝ առաջին անցումով:**
2. Ուղիղ եւ դեպի աջ՝ առաջին անցումով:

Պատ.՝ 1

---

11. **Այս լուսացույցն արգելում է երթևեկությունը՝**



1. **Միայն դեպի ձախ:**
2. Ուղիղ եւ դեպի ձախ:
3. Ուղիղ եւ դեպի աջ:
4. Միայն դեպի աջ:

Պատ.՝ 1

---


12. **Եթե կարգավորողի ձեռքերը կողմ են պարզված կամ իջեցված են, ապա ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթեւեկությունը թույլատրվում է**

1. Թիկունքի եւ կրծքի կողմից՝ միայն դեպի աջ:
2. **Ձախ եւ աջ կողմերից՝ ուղիղ եւ դեպի աջ:**
3. Ձախ եւ աջ կողմերից՝ միայն ուղիղ:

Պատ.՝ 2

---


13. Ո՞ր տրանսպորտային միջոցներին է թույլատրվում երթեւեկությունը:



1. **Դեղին եւ կարմիր ավտոմոբիլներին**
2. Կանաչ, կարմիր եւ սպիտակ ավտոմոբիլներին
3. Սպիտակ եւ կանաչ ավտոմոբիլներին

Պատ.՝ 1

14. Լուսացույցի ի՞նչ ազդանշանի դեպքում ավտոմոբիլի վարորդը կարող է ավարտել հետադարձը:



1. Կարմիր
2. **Կանաչ**
3. Ցանկացած

Պատ.՝ 2

15. **Ի՞նչ է նշանակում լուսացույցի դեղին եւ կարմիր գույների ազդանշանների զուգակցումը:**




1. Թույլատրվում է սկսել երթեւեկությունը
2. **Արգելվում է երթեւեկությունը եւ տեղեկացնում կանաչ ազդանշանի՝ առաջիկայում միանալու մասին**
3. Խաչմերուկին մոտենում է հատուկ ձայնային ազդանշան եւ առկայծող փարոսիկներ միացրած տրանսպորտային միջոց

Պատ.՝ 2

---

16. **Ո՞ր նկարում է վարորդը ճիշտ կատարում շրջադարձը:**




1. **Ձախ նկարում**
2. Աջ նկարում

Պատ.՝ 1

---

17. **Պարտավո՞ր է արդյոք տրամվայի վարորդը լուսացույցի կանաչ ազդանշանի դեպքում զիջել ճանապարհին այլ ուղղություններից մոտեցող տրանսպորտային միջոցներին:**




1. **Պարտավոր է**
2. Պարտավոր չէ

Պատ.՝ 1

---

18. **Այս լուսացույցը կիրառվում է երթեւեկությունը կարգավորելու համար՝**



1. Երթեւեկելի մասի ամբողջ լայնությամբ:
2. **Երթեւեկելի մասի այն գոտիներով, որտեղ երթեւեկության ուղղությունը կարող է փոխվել հանդիպակացի:**
3. Միայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների երթեւեկության համար նախատեսված գոտիներում:

Պատ.՝ 2

---


19. **Եթե կարգավորողի աջ ձեռքը պարզված է առաջ, ապա նրա ձախ կողմից ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթեւեկությունը թույլատրվում է**

1. **Բոլոր ուղղություններով:**
2. Միայն դեպի ձախ:

Պատ.՝ 1

---

20. **Ո՞ր տրանսպորտային միջոցների երթեւեկությունն է թույլատրվում լուսացույցի տվյալ ազդանշանի դեպքում:**




1. Տրամվայի, դեղին եւ կարմիր ավտոմոբիլների
2. **Դեղին եւ կարմիր ավտոմոբիլների**
3. Բոլոր տրանսպորտային միջոցների

Պատ.՝ 2

---

21. **Երթեւեկությունը թույլատրվում է**



1. Բոլոր տրանսպորտային միջոցներին:
2. **Մոտոցիկլին:**
3. Ավտոմոբիլին եւ մոտոցիկլին:

Պատ.՝ 2

---


22. **Եթե կարգավորողի ձեռքերը կողմ են պարզված կամ իջեցված են, ապա նրա ձախ եւ աջ կողմերից ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթեւեկությունը թույլատրվում է**

1. **Ուղիղ եւ դեպի աջ:**
2. Միայն ուղիղ:

Պատ.՝ 1

---

23. Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդն ունի երթեւեկության առավելություն:




1. Ավտոմոբիլի վարորդը
2. **Տրամվայի վարորդը**

Պատ.՝ 2

---

24. Երթեւեկել արգելվում է




1. Կանաչ եւ սպիտակ ավտոմոբիլներին:
2. **Սպիտակ, կապույտ եւ կանաչ ավտոմոբիլներին:**
3. Սպիտակ եւ դեղին ավտոմոբիլներին:
4. Կանաչ եւ դեղին ավտոմոբիլներին:

Պատ.՝ 2

---

25. Այս լուսացույցի կարմիր ազդանշանի դեպքում երթեւեկությունն արգելվում է



1. երթեւեկելի մասի ամբողջ լայնությամբ:
2. ոչ ավել, քան 50 կմ/ժ արագությամբ:
3. **Այն գոտիով, որի վերեւում տեղակայված է:**

Պատ.՝ 3

---


26. Ի՞նչ նշանակություն ունի լուսացույցի կլոր կանաչ թարթող ազդանշանը:

1. Տեղեկացնում է, որ մուտքը խաչմերուկ արգելվում է
2. **Թույլատրում է երթեւեկությունը եւ տեղեկացնում, որ դրա գործողության ժամկետը լրանում է եւ շուտով կմիանա արգելող ազդանշանը**

Պատ.՝ 2

---

27. Տրանսպորտային միջոցները խաչմերուկը կանցնեն հետեւյալ հերթականությանբ՝



1. Տրամվայը, կարմիր ավտոմոբիլը, կանաչ ավտոմոբիլը:
2. **Կարմիր ավտոմոբիլը, տրամվայը՝ կանաչ ավտոմոբիլի հետ միաժամանակ:**
3. Տրամվայը՝ կանաչ ավտոմոբիլի հետ միաժամանակ, կարմիր ավտոմոբիլը:

Պատ.՝ 2

---

28. **Ո՞ր պատասխանում են ճիշտ նշված այն տրանսպորտային միջոցները, որոնց երթեւեկությունը թույլատրվում է:**



1. **Ավտոմոբիլները եւ մոտոցիկլը**
2. Բոլոր տրանսպորտային միջոցները
3. Ավտոմոբիլները եւ տրամվայը

Պատ.՝ 1

---


29. **Եթե կարգավորողի աջ ձեռքը պարզված է առաջ, ապա նրա ձախ կողմից ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթեւեկությունը թույլատրվում է**

1. Ուղիղ եւ դեպի ձախ:
2. **Բոլոր ուղղություններով:**

Պատ.՝ 2

---

30. **Երթեւեկել արգելվում է**




1. **Կապտադեղին ավտոմոբիլին՝ դեպի ձախ:**
2. Կապտադեղին ավտոմոբիլին՝ ուղիղ, կարմիր ավտոմոբիլին՝ ուղիղ եւ դեպի աջ:
3. Կարմիր ավտոմոբիլին:

Պատ.՝ 1

---

31. **Ո՞ր ուղղությամբ է թույլատրվում երթեւեկությունը:**




1. Ուղիղ եւ դեպի աջ՝ առաջին անցումով
2. **Դեպի աջ՝ առաջին անցումով**
3. Դեպի աջ՝ երկրորդ անցումով
4. Դեպի աջ՝ առաջին եւ երկրորդ անցումներով

Պատ.՝ 2

---

32. **Խաչմերուկն առաջինը կանցնի**




1. Կարմիր ավտոմոբիլը:
2. Կապույտ ավտոմոբիլը:
3. **Կանաչ ավտոմոբիլը:**

Պատ.՝ 3

---


33. Ո՞ր նկարում է վարորդը ճիշտ կատարում շրջադարձը:



1. **Ձախ նկարում**
2. Աջ նկարում
3. Երկու նկարներում էլ

Պատ.՝ 1


34. Կարմիր ավտոմոբիլը խաչմերուկը կանցնի



1. Առաջինը:
2. Երկրորդը:
3. Երրորդը:
4. **Վերջինը:**

Պատ.՝ 4

35. Այս լուսացույցը կիրառվում է՝




1. Տրամվայների և տրոլեյբուսների երթևեկությունը կարգավորելու համար:
2. Միայն տրամվայների երթևեկությունը կարգավորելու համար:
3. **Տրամվայների, ինչպես նաև առանձնացված գոտիներով երթևեկող ընդհանուր օգտագործման այլ տրանսպորտային միջոցների երթևեկությունը կարգավորելու համար:**

Պատ.՝ 3

---

36. Ավտոմոբիլը խաչմերուկը կանցնի




1. **Առաջինը:**
2. Երկրորդը:

Պատ.՝ 1

---

37. Երթեւեկությունը թույլատրվում է




1. Կապտադեղին ավտոմոբիլին՝ ուղիղ, կարմիրին՝ դեպի աջ:
2. **Կարմիր ավտոմոբիլին՝ ուղիղ եւ դեպի աջ, կապտադեղինին՝ ուղիղ:**
3. Երկու ավտոմոբիլներին՝ միայն ուղիղ:

Պատ.՝ 2

---

38. Երթեւեկությունը թույլատրվում է



1. **Կարմիր ավտոմոբիլին:**
2. Մոտոցիկլին:
3. Տրամվային եւ կարմիր ավտոմոբիլին:
4. Տրամվային:
5. Կապույտ ավտոմոբիլին:

Պատ.՝ 1

---

39. **Թույլատրվու՞մ է երթեւեկել նշված հետագծով, երբ դարձափոխային լուսացույցերն անջատված են:**



1. Թույլատրվում է
2. Թույլատրվում է վազանցելու նպատակով
3. **Արգելվում է**
4. Թույլատրվում է՝ հանդիպակաց երթեւեկող տրանսպորտային միջոցների բացակայության դեպքում

Պատ.՝ 3

---

40. **Տվյալ իրավիճակում ո՞ր տրանսպորտային միջոցներն ունեն երթեւեկությունը շարունակելու իրավունք:**




1. Թեթեւ մարդատար ավտոմոբիլը՝ ուղիղ, պարեկային ավտոմոբիլը՝ բոլոր ուղղություններով, ավտոբուսը՝ միայն աջ
2. Միայն պարեկային ավտոմոբիլը՝ բոլոր ուղղություններով
3. **Պարեկային ավտոմոբիլը՝ բոլոր ուղղություններով, ավտոբուսը՝ միայն աջ**

Պատ.՝ 3

---

41. Ի՞նչ է տեղեկացնում լուսացույցի ազդանշանը:




1. Լուսացույցն անսարք է
2. Խաչմերուկն անցնելիս վարորդները պետք է ղեկավարվեն ճանապարհային նշանի պահանջներով
3. **Վարորդները պետք է սպասեն լուսացույցի թույլատրող ազդանշանին**

Պատ.՝ 3

---

42. Ո՞ր տրանսպորտային միջոցը պետք է զիջի ճանապարհը:




1. **Ավտոբուսը**
2. Մոտոցիկլը եւ թեթեւ մարդատար ավտոմոբիլը

Պատ.՝ 1

---

43. **Նշված հետագծերով երթեւեկությունը շարունակելու իրավունք ունեն**




1. Բեռնատար ավտոմոբիլի վարորդը:
2. Ավտոբուսի եւ բեռնատար ավտոմոբիլների վարորդները:
3. Թեթեւ մարդատար ավտոմոբիլի եւ ավտոբուսի վարորդները:
4. **Ավտոբուսի վարորդը:**

Պատ.՝ 4

---

44. **Տրանսպորտային միջոցները խաչմերուկը կանցնեն հետեւյալ հերթականությամբ՝**



1. Տրամվայը, թեթեւ մարդատար ավտոմոբիլը, ավտոբուսը:
2. **Թեթեւ մարդատար ավտոմոբիլը, տրամվայը, ավտոբուսը:**
3. Թեթեւ մարդատար ավտոմոբիլը, ավտոբուսը, տրամվայը:

Պատ.՝ 2

---

45. Տվյալ իրադրությունում ավտոբուսի վարորդն ունի՞ ուղիղ երթևեկելու իրավունք:



1. Այո:
2. **Ոչ:**
3. Այո, եթե նա երթևեկում է սահմանված երթուղով:

Պատ.՝ 2

46. Ո՞ր ուղղությամբ կարող է վարորդը շարունակել երթեւեկությունը:



1. **Դեպի աջ՝ առաջին անցումով**
2. Դեպի աջ՝ առաջին եւ երկրորդ անցումներով
3. Դեպի ձախ՝ առաջին անցումով

Պատ.՝ 1


47. Աջ շրջադարձի դեպքում վարորդը պարտավոր է ճանապարհը զիջել



1. Միայն հեծանվորդին:
2. Միայն հետիոտներին:
3. **Հետիոտներին եւ հեծանվորդին:**
4. Կարող է շարունակել երթեւեկությունը՝ առանց կանգ առնելու:

Պատ.՝ 3

48. Տրանսպորտային միջոցները խաչմերուկը կանցնեն հետեւյալ հերթականությամբ՝



1. Տրամվայը, ավտոբուսը, բեռնատար ավտոմոբիլը, մոտոցիկլը:
2. Ավտոբուսը, բեռնատար ավտոմոբիլը, տրամվայը, մոտոցիկլը:
3. **Ավտոբուսը, տրամվայը եւ մոտոցիկլը, բեռնատար ավտոմոբիլը:**

Պատ.՝ 3

49. Այս իրավիճակում ո՞ր տրամվայի վարորդին պետք է զիջել ճանապարհը:



1. Ոչ մեկին
2. **Երկու տրամվայների**
3. Միայն A

Պատ.՝ 2

---

50. Ո՞ր վարորդն ունի առաջնահերթ երթևեկության իրավունք:



1. Ավտոբուսի վարորդը
2. **Թեթև մարդատարի վարորդը**

Պատ.՝ 2

---

51. Այս իրավիճակում ձախ շրջադարձ կատարելիս



1. Կզիջեմ ճանապարհը տրամվային:
2. **Խաչմերուկն առաջինը կանցնեմ:**

Պատ.՝ 2

---

52. Ինչպե՞ս վարվել այս իրավիճակում:



1. Մուտք գործել խաչմերուկ և, զիջելով ճանապարհը թեթև մարդատարի վարորդին, անցնել խաչմերուկը
2. Սպասել «Կանգ-գծի» առջև, մինչև թեթև մարդատարի վարորդը կանցնի խաչմերուկը
3. Անցնել առաջինը

Պատ.՝ 1

53. Աջ շրջադարձ կատարելիս այս իրավիճակում զիջել ճանապարհը



1. Պարտավոր եք:
2. Պարտավոր չեք:

Պատ.՝ 1

54. Աջ շրջադարձ թույլատրելի՞ է այս իրավիճակում:



1. Այո՝ չխոչընդոտելով հետիոտններին
2. Ոչ

Պատ.՝ 1

55. Չիջել ճանապարհը տրամվայի վարորդին այս իրավիճակում



1. Պարտավոր չեք:
2. **Պարտավոր եք:**

Պատ.՝ 2

56. Կանաչ ազդանշանը միանալու դեպքում վարորդը



1. **Պետք է զիջի բեռնատարի վարորդին:**
2. Ունի առաջնահերթ երթևեկելու իրավունք:

Պատ.՝ 1

57. Այս խաչմերուկում վարորդը



1. **Կանցնի առաջինը:**
2. Պետք է զիջի ճանապարհը տրամվային:

Պատ.՝ 1

58. **Խաչմերուկն ուղիղ անցնելիս վարորդը**



1. Կարող է առաջինն անցնել:
2. **Պետք է զիջի տրամվային:**
3. Պետք է զիջի երկու վարորդներին:

Պատ.՝ 2

---

59. **Շրջադարձը կատարելիս վարորդը պարտավոր է ճանապարհը զիջել**




1. Միայն հետիոտներին:
2. Հեծանվորդին:
3. **Հեծանվորդին և հետիոտներին:**

Պատ.՝ 3

---

60. **Աջ շրջադարձ կատարելիս պարտավո՞ր եք զիջել ճանապարհը հանդիպակաց գոտուց մոտեցող վարորդին:**



1. Այո
2. **Ոչ**

Պատ.՝ 2

---

61. Խաչմերուկն ուղիղ անցնելիս



1. Կարող ենք անցնել առաջինը:
2. **Պարտավոր ենք զիջել ճանապարհը թեթև մարդատարի վարորդին:**

Պատ.՝ 2

---

62. Ձախ շրջադարձ կատարելիս պետք է զիջել



1. Միայն թեթև մարդատարի վարորդին:
2. Միայն հետիոտներին:
3. **Թեթև մարդատարի վարորդին և հետիոտներին:**

Պատ.՝ 3

---

63. Այս իրավիճակում աջ շրջադարձ թույլատրվո՞ւմ է:



1. Ոչ
2. **Այո՝ չխոչընդոտելով հետիոտնին**

Պատ.՝ 2

---

64. Ձախ շրջադարձը կատարելիս



1. **Պարտավոր եք զիջել տրամվայի վարորդին:**
2. Խաչմերուկն անցնել առաջինը:

Պատ.՝ 1

---


65. Ո՞ր ճանապարհային նշանները չեն գործում, երբ դրանց պահանջները հակասում են լուսացույցի ազդանշաններին:

1. **Առավելության նշանները**
2. Արգելող նշանները
3. Թելադրող նշանները
4. Բոլոր թվարկվածները

Պատ.՝ 1

---

66. Այս իրավիճակում ճանապարհը պարտավոր է զիջել



1. Թեթև մարդատարի վարորդը:
2. **Տրամվայի վարորդը:**

Պատ.՝ 2

---

67. Աջ շրջադարձ կատարելիս




1. Պարտավոր ենք զիջել ճանապարհը տրամվայի վարորդին:
2. **Խաչմերուկը կանցնենք առաջինը:**

Պատ.՝ 2

---

68. Մտադիր եք կատարել ձախ շրջադարձ: Ո՞ւմ եք պարտավոր զիջել ճանապարհը:



1. Միայն տրամվայի վարորդին
2. Ոչ ոքի
3. **Ավտոմոբիլի և տրամվայի վարորդներին**

Պատ.՝ 3

---

69. Ձախ շրջադարձ կատարելիս




1. Մանևրը կկատարեմ՝ առանց կանգ առնելու:
2. **Խաչմերուկ մուտք գործելուց հետո կկանգնեմ երկրորդ ″Կանգ-գծի″ առջև և կսպասեմ կանաչ ազդանշանի միանալուն:**

Պատ.՝ 2

---

70. **Պարտավոր ենք արդյո՞ք այս իրավիճակում զիջել բեռնատարի վարորդին:**



1. **Այո**
2. Ոչ

Պատ.՝ 1

---

71. **Այս իրադրությունում ձախ շրջադարձ կատարելիս պետք է**




1. Մուտք գործել խաչմերուկ և սպասել կարգավորողի՝ ձախ շրջադարձ թույլատրող ազդանշանին:
2. **Կանգ առնել "Կանգ-գիծ" գծանշման առջև և սպասել կարգավորողի՝ ձախ շրջադարձ թույլատրող ազդանշանին:**
3. Դուրս գալ խաչմերուկ և հանդիպակաց գոտուց մոտեցող վարորդին ճանապարհը զիջելուց հետո անցնել խաչմերուկը:

Պատ.՝ 2

---

72. **Ո՞ր դեպքում կարող եք խաչմերուկն անցնել առանց ճանապարհը զիջելու՝ երթևեկության այլ մասնակցին:**



1. **Ուղիղ անցնելու դեպքում**
2. Աջ շրջադարձ կատարելիս
3. Ձախ շրջադարձ կատարելիս

Պատ.՝ 1

---

73. Աջ շրջադարձ կատարելիս պետք է



1. Կանգ առնել «Կանգ-գծի» առջև՝ հետիոտներին չխոչընդոտելու նպատակով:
2. **Մտնելով խաչմերուկ կանգ առնել՝ հետիոտներին չխոչընդոտելու նպատակով:**
3. Անցնել խաչմերուկը՝ առանց կանգ առնելու:

Պատ.՝ 2

---

74. Աջ շրջադարձ կատարելիս



1. Պետք է զիջել ճանապարհը թեթև մարդատարի վարորդին:
2. **Առաջինը անցնել խաչմերուկը:**

Պատ.՝ 2

---

75. Լուսացույցի թույլատրող ազդանշանի միանալուց հետո խաչմերուկ մուտք գործել կարող ենք




1. **Միայն հետադարձ կամ շրջադարձ կատարելու դեպքում:**
2. Բոլոր դեպքերում:

Պատ.՝ 1

---

76. Լուսացույցի կանաչ ազդանշանի միացման դեպքում պարտավոր ենք



1. համոզվել, որ հետիոտնային անցման չերևացող մասում չկան անցումը չավարտած հետիոտներ:
2. լուսացույցի ազդանշանի համաձայն անմիջապես սկսել երթևեկությունը:

Պատ.՝ 1

---

77. Այս իրավիճակում հետադարձ կատարելիս ճանապարհը զիջել մյուս վարորդին



1. Պարտավոր չենք:
2. Պարտավոր ենք:

Պատ.՝ 2

---

78. Այս իրավիճակում ո՞ր ուղղությամբ կարող է վարորդը շարունակել երթևեկությունը:



1. Միայն ուղիղ
2. Ուղիղ և աջ
3. Ուղիղ և ձախ
4. Բոլոր

Պատ.՝ 1

---

79. Ո՞ր վարորդը կարող է շարունակել երթևեկությունը:



1. Ոչ ոք
2. Միայն ավտոբուսի վարորդը
3. **Երկու վարորդներն էլ**

Պատ.՝ 3

---

80. Գծանցն անցնելը



1. **Թույլատրված է:**
2. Արգելված է:

Պատ.՝ 1

---

81. Վարորդին խաչմերուկն անցնել




1. Արգելվում է:
2. Թույլատրվում է բոլոր դեպքերում:
3. **Թույլատրվում է, եթե նա հնարավորություն չունի առանց կտրուկ արգելակելու կանգնել «Կանգ-գծի» առջև:**

Պատ.՝ 3

---

82. Լուսացույցի ազդանշանին ենթարկվելով՝ որտե՞ղ պետք է կանգնել:



1. **Լուսացույցի առջև**
2. Հատվող երթևեկելի մասի առջև
3. Ցանկացած տեղում

Պատ.՝ 1


83. Ձախ շրջադարձ կատարելը թույլատրվում է



1. Դարձափոխային գոտուց:
2. **Նկարում նշված գոտուց:**

Պատ.՝ 2

84. Երթևեկությունը թույլատրվում է



1. Միայն ուղիղ:
2. Միայն աջ:
3. **Ուղիղ և աջ:**

Պատ.՝ 3

85. Երթևեկությունը թույլատրվում է



1. Ուղիղ և աջ:
2. Միայն ուղիղ:
3. **Միայն աջ:**

Պատ.՝ 3

86. Լուսացույցի կանաչ ազդանշանին պատկերված սլաքները տեղեկացնում են, որ



1. Աջ շրջադարձն արգելված է:
2. **Աջ ուղղությամբ երթևեկությունը կարգավորվում է լրացուցիչ սեկցիայով:**

Պատ.՝ 2

87. Վազանցել բեռնատարին թույլատրվու՞մ է:



1. Այո
2. **Ոչ**

Պատ.՝ 2

88. Ո՞ր ուղղությամբ վարորդը կարող է շարունակել երթևեկությունը այս իրավիճակում:




1. Միայն ձախ
2. Պետք է սպասի թույլատրող ազդանշանի
3. **Ձախ և հակառակ**

Պատ.՝ 3

---

89. Այս իրավիճակում մուտք գործել դարձափոխային երթևեկության գոտի



1. **Թույլատրվում է:**
2. Թույլատրվում է միայն վազանց կատարելու նպատակով:
3. Արգելվում է:

Պատ.՝ 1

---

90. Նշված գոտուց ուղիղ երթևեկությունը



1. Թույլատրվում է:
2. Թույլատրվում է միայն հիմնական կանաչ ազդանշանի միանալուց հետո:
3. **Արգելվում է:**

Պատ.՝ 3

---

91. **Երթևեկությունը թույլատրվում է**



1. Ուղիղ և աջ:
2. Միայն աջ:
3. **Բոլոր ուղղություններով:**

Պատ.՝ 3

---

92. **Այս իրավիճակում երթևեկությունը**



1. Թույլատրվում է:
2. **Արգելվում է:**

Պատ.՝ 2

---

93. **Ավտոբուսի վարորդը երթևեկությունը սկսելուց կամ մանևր կատարելուց առաջ պետք է համոզված լինի, որ**

1. Տվյալ պահին իր գոտում չկան այլ տրանսպորտային միջոցներ:
2. **Մանևրն անվտանգ է և խոչնդոտ չի ստեղծի երթևեկության մյուս մասնակիցների համար:**
3. Մանևրը կկատարի հնարավորինս արագ ճանապարհը շուտ ազատելու համար:

Պատ.՝ 2

---

94. **Թույլատրվու՞մ է երթևեկել երթևեկելի մասի ձախ կողմում՝ նույն մակարդակի վրա գտնվող համընթաց ուղղությամբ տրամվայի գծերով, եթե տվյալ ուղղությամբ բոլոր գոտիները զբաղված են:**

1. **Թույլատրվում է, եթե համապատասխան նշաններով երթևեկության այլ կարգ սահմանված չէ, և եթե դա խոչնդոտ չի ստեղծի տրամվայի երթևեկության համար**
2. Թույլատրվում է միայն այն դեպքում, եթե տրանսպորտային միջոցն իրականացնում է վազանց
3. Արգելվում է բոլոր դեպքերում, քանի որ տրամվայի գծերը նախատեսված են բացառապես ռելսագնաց տրանսպորտային միջոցների համար

Պատ.՝ 1

---

95. **Եթե երթևեկելի մասը գծանշմամբ բաժանված է գոտիների, ո՞ր դեպքում է վարորդին թույլատրվում հատել գոտիները բաժանող ընդհատվող գծերը:**

1. **Թույլատրվում է հատել միայն վերադասավորում կատարելիս**
2. Թույլատրվում է հատել և ընթանալ ընդհատվող գծի վրայով ցանկացած ժամանակ, եթե ճանապարհին այլ տրանսպորտային միջոցներ չկան
3. Երկու դեպքում էլ

Պատ.՝ 1

---

96. **Ինչպիսի՞ տարածություն պետք է պահպանի ավտոբուսի վարորդն իր և առջևից ընթացող տրանսպորտային միջոցի միջև:**

1. **Այնպիսի, որպեսզի հնարավորություն ունենա խուսափել դրա հետ բախվելուց:**
2. Այնպիսի, որը թույլ կտա իրեն վազանցող այլ տրանսպորտային միջոցներին անարգել կատարել վազանց և վերադասավորվել իր առջև:

Պատ.՝ 1

---

97. **Ինչպիսի՞ միջկողային տարածություն պետք է պահպանի ավտոբուսի վարորդն իր կողքով ընթացող տրանսպորտային միջոցից:**

1. **Այնպիսի, որպեսզի հնարավորություն ունենա խուսափել դրա հետ բախվելուց:**
2. 0.5 մետրից ոչ պակաս տարածություն:
3. 1 մետրից ոչ պակաս տարածություն:

Պատ.՝ 1

---

98. **Բնակավայրից դուրս, յուրաքանչյուր ուղղության համար մեկ գոտի ունեցող երկկողմ երթևեկության ճանապարհներին 7 մետրից ավելի երկարություն ունեցող ավտոբուսների վարորդներն իրենց և առջևից ընթացող տրանսպորտային միջոցի միջև ի՞նչ տարածություն պետք է պահպանեն:**

1. Ոչ պակաս, քան 50 մետր տարածություն՝ անկախ երթևեկության արագությունից և ճանապարհային պայմաններից
2. **Որպեսզի իրենց վազանցող տրանսպորտային միջոցների վարորդները հնարավորություն ունենան անհրաժեշտության դեպքում առանց խոչընդոտի վերադասավորվեն նախկինում զբաղեցրած գոտի**
3. Իրենց հայեցողությամբ՝ ելնելով երթևեկության անվտանգությունից

Պատ.՝ 2

---

99. **Վազանցը սկսելուց առաջ ավտոբուսի վարորդն ի թիվս այլ պահանջների, պետք է համոզված լինի, որ**

1. **Վազանցն ավարտելիս կարող է առանց վազանցվող տրանսպորտային միջոցի համար խոչընդոտ ստեղծելու վերադառնալ նախկինում զբաղեցրած գոտի:**
2. Առջևից ընթացող տրանսպորտային միջոցի վարորդը նկատել է իր մանևրը և արագությունը նվազեցնելու միջոցով զիջում է ճանապարհը:
3. Երկու դեպքերում էլ:

Պատ.՝ 1

---

100. **Վազանցը սկսելուց առաջ ավտոբուսի վարորդն ի թիվս այլ պահանջների, պետք է համոզված լինի, որ**

1. Հետևից ընթացող տրանսպորտային միջոցները պահպանում են բավարար տարածություն, իսկ առջևի տրանսպորտային միջոցը արդեն սկսել է նվազեցնել արագությունը իրեն ճանապարհ տալու համար:
2. **Իր հետևից նույն գոտիով ընթացող տրանսպորտային միջոցը վազանց չի սկսել, իսկ առջևից ընթացողը վազանցի (ձախ շրջադարձի, հետադարձի) ազդանշան չի տվել:**
3. Երկու դեպքերում էլ:

Պատ.՝ 2

---

101. **Թույլատրվու՞մ է ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցներին վազանցել աջ կողմից:**

1. **Թույլատրվում է վազանցել աջ կողմից այն դեպքում, երբ առջևից ընթացող տրանսպորտային միջոցի վարորդը տվել է ձախ շրջադարձի ազդանշան և սկսել է մանևրի կատարումը**
2. Արգելվում է բոլոր դեպքերում, քանի որ վազանցը պետք է կատարվի բացառապես ձախ կողմից՝ անվտանգության նկատառումներից ելնելով

Պատ.՝ 1

---

102. **Այն դեպքերում, երբ բնակավայրերից դուրս մեծ եզրաչափեր ունեցող ավտոբուսին վազանց կատարելը դժվար է, ի՞նչ պետք է ձեռնարկի ավտոբուսի վարորդը:**

1. **Պարտավոր է երթևեկել հնարավորինս աջ, իսկ անհրաժեշտության դեպքում կանգ առնի իր հետևից ընթացող տրանսպորտային միջոցներին բաց թողնելու համար**
2. Պարտավոր է միացնել վթարային լուսային ազդանշանը և շարունակել երթևեկությունը նույն արագությամբ՝ մինչև վազանցի համար թույլատրելի հատվածի հասնելը

Պատ.՝ 1

---

103. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի վարորդին միաժամանակ վազանցել մի քանի տրանսպորտային միջոցների:**

1. **Թույլատրվում է, եթե մանևրն անվտանգ կլինի երթևեկության մյուս մասնակիցների համար**
2. Արգելվում է, վարորդը պարտավոր է յուրաքանչյուր տրանսպորտային միջոցին վազանցելուց հետո վերադառնալ իր նախկին գոտի և նոր միայն սկսել հաջորդ վազանցը
3. Թույլատրվում է միայն դանդաղընթաց տրանսպորտային միջոցներին

Պատ.՝ 1

---

104. **Թույլատրվու՞մ է վազանց սկսել այն տրանսպորտային միջոցին, որի վարորդը տվել է ձախ շրջադարձի լուսային ազդանշան և սկսել է մանևրի կատարումը:**

1. Թույլատրվում է
2. Արգելվում է
3. **Թույլատրվում է միայն այն դեպքում, երբ դա կատարվում է աջ կողմից**

Պատ.՝ 3

---

105. **Արգելվու՞մ է հետադարձը ճանապարհի թեկուզ և մեկ ուղղությամբ 100մ-ից պակաս տեսանելիության տեղերում:**

1. Արգելվում է միայն բնակավայրերում
2. Արգելվում է բնակավայրերից դուրս
3. **Արգելվում է բոլոր ճանապարհներին**
4. Չի արգելվում

Պատ.՝ 3

---

106. **Ի՞նչ պետք է ձեռնարկի ավտոբուսի վարորդը հետընթացով երթևեկելիս անվտանգությունն ապահովելու համար:**

1. Անընդհատ տա ձայնային ազդանշան
2. Պետք է միացնի գաբարիտային լույսերը և շարժվի հնարավորինս նվազագույն արագությամբ
3. **Անհրաժեշտության դեպքում դիմի այլ անձանց օգնությանը**
4. Կատարի թվարկված բոլոր գործողությունները

Պատ.՝ 3

---

107. **Ինչպե՞ս պետք է վարորդը որոշի երթևեկելի գոտիների քանակը, եթե բացակայում են ճանապարհային գծանշումները և երթևեկության ուղղությունները սահմանող համապատասխան թելադրանքի նշանները:**

1. Եթե գծանշումները չկան, ապա ճանապարհը համարվում է մեկ գոտի ունեցող՝ անկախ դրա լայնությունից
2. **Գոտիների քանակը որոշվում է ՝ հաշվի առնելով երթևեկելի մասի լայնությունը, տրանսպորտային միջոցների եզրաչափերը և դրանց միջև անհրաժեշտ միջկողային տարածությունը**

Պատ.՝ 2

---

108. **Միևնույն ուղղությամբ երեք և ավելի գոտիներ ունեցող ճանապարհներին ո՞ր դեպքում է թույլատրվում կանոնավոր փոխադրումները իրականացնող ավտոբուսներին զբաղեցնել ձախ եզրային գոտին :**

1. Ինտենսիվ երթևեկության ժամանակ, եթե մյուս բոլոր գոտիները զբաղված են
2. Միայն այլ տրանսպորտային միջոցների վազանց կատարելու կամ արգելքը շրջանցելու նպատակով
3. **Միայն ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելու համար**
4. Ցանկացած դեպքում

Պատ.՝ 3

---

109. **Ավտոբուսի վարորդը տրանսպորտային միջոցի տեխնիկական պատճառներով չի կարող զարգացնել 40կմ/ժ-ից ավելի արագություն, թույլատրվու՞մ է արդյոք դուրս գալ զբաղեցրած աջ եզրային գոտուց՝ ձախ կողմում կանգառ կատարելու նպատակով:**

1. Արգելվում է, քանի որ 40կմ/ժ-ից ոչ ավելի արագությամբ ընթացող տրանսպորտային միջոցները պետք է երթևեկեն բացառապես աջ եզրային գոտիով՝ առանց դրանից դուրս գալու իրավունքի
2. **Թույլատրվում է, եթե կանգառը կատարվում է այնպիսի վայրում, որտեղ դա թույլատրվում է կանոններով**

Պատ.՝ 2

---

110. **Բնակավայրում ինտենսիվ երթևեկության ժամանակ ո՞ր դեպքում է թույլատրվում փոխել երթևեկության գոտին:**

1. Միայն ձախ և աջ շրջադարձերի ժամանակ
2. Միայն հետադարձի ժամանակ
3. Միայն արգելքը շրջանցելուց և կանգառ կատարելուց առաջ
4. **Թվարկված բոլոր դեպքերում:**
5. Միայն 1 և 3 դեպքերում:

Պատ.՝ 4

---

111. **Արգելվու՞մ է ավտոբուսների երթևեկությունը կողնակներով, մայթերով և հետիոտնային արահետներով՝ այլ հնարավորության բացակայության դեպքում:**

1. Արգելվում է
2. **Թույլատրվում է ճանապարհային շահագործման և կոմունալ սպասարկման ծառայությունների ավտոբուսներին՝ խոչընդոտ չհանդիսանալով հետիոտներին և ապահովելով երթևեկության անվտանգությունը**

Պատ.՝ 2

---

112. **Բնակավայրից դուրս ո՞ր գոտիով պետք է երթևեկեն ավտոբուսները:**

1. **Երթևեկելի մասի աջ եզրին հնարավորինս մոտ**
2. Ցանկացած գոտիով, բացի ձախ եզրային գոտուց
3. Վարորդի հայեցողությամբ՝ ապահովելով երթևեկության անվտանգությունը

Պատ.՝ 1

---

113. **Բնակավայրում «Ճանապարհ ավտոմոբիլների համար» նշանով կահավորված ճանապարհին ո՞ր գոտիով պետք է երթևեկեն ավտոբուսները:**



1. **Երթևեկելի մասի աջ եզրին հնարավորինս մոտ:**
2. Ցանկացած գոտիով, բացի ձախ եզրային գոտուց:

Պատ.՝ 1

---

114. **Միևնույն ուղղությամբ երեք գոտի ունեցող ճանապարհին ո՞ր գոտիներով է թույլատրվում երթևեկել ուղևորների կանոնավոր փոխադրում իրականացնող ավտոբուսներին:**

1. **Միայն առաջին և երկրորդ գոտիներով, եթե չի կատարում ձախ շրջադարձ կամ հետադարձ**
2. Ցանկացած գոտիով, եթե երթևեկությունն ինտենսիվ է և մյուս գոտիները զբաղված են

Պատ.՝ 1

---

115. **Ավտոբուսի վարորդին թույլատրվու՞մ է վազանցել տրանսպորտային միջոցին, որը խաչմերուկից անմիջապես առաջ նվազեցրել է արագությունը:**

1. Թույլատրվում է, եթե տվյալ պահին բացակայում են երթևեկելի մասն անցնող հետիոտներ
2. **Արգելվում է**
3. Թույլատրվում է, եթե խաչմերուկի տեսադաշտը բավարար է մանևրն անվտանգ կատարելու համար

Պատ.՝ 2

---

116. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի վարորդին կատարել վազանց ճանապարհի վերելքի վերջում, եթե վազանցն իրականացվում է առանց հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալու:**

1. **Թույլատրվում է**
2. Արգելվում է

Պատ.՝ 1

---

117. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի վարորդին կատարել վազանց ճանապարհի վերելքի վերջում, եթե վազանցն իրականացվում է հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալով:**

1. Թույլատրվում է
2. **Արգելվում է**
3. Թույլատրվում է, եթե հանդիպակաց գոտում այլ տրանսպորտային միջոցներ չկան

Պատ.՝ 2

---

118. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի վարորդին կատարել վազանց ճանապարհի սահմանափակ տեսանելիության հատվածներում, երբ վազանցը կատարվում է հանդիպակաց երթևեկելի գոտի դուրս գալով:**

1. Թույլատրվում է
2. **Արգելվում է**
3. Թույլատրվում է, եթե վարորդը համոզված է, որ անվտանգ կավարտի մանևրը

Պատ.՝ 2

---

119. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի վարորդին կատարել վազանց ճանապարհի սահմանափակ տեսանելիության հատվածներում, երբ վազանցն իրականացվում է առանց հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալու:**

1. **Թույլատրվում է**
2. Արգելվում է

Պատ.՝ 1

---

120. **Ավտոբուսի վարորդին թույլատրվու՞մ է վազանց կատարել ճանապարհի սահմանափակ տեսանելիությամբ հատվածներում:**

1. **Թույլատրվում է, եթե վազանցը կատարվում է առանց հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալու:**
2. Արգելվում է անկախ տեսանելիությունից և հանդիպակաց գոտի դուրս գալու հանգամանքից
3. Թույլատրվում է ցանկացած ժամանակ

Պատ.՝ 1

---

121. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի վարորդին կատարել վազանց ճանապարհի նեղացումներում:**

1. Թույլատրվում է, եթե վազանցն իրականացվում է առանց հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալու
2. **Արգելվում է**
3. Թույլատրվում է, եթե վարորդը համոզված է, որ անվտանգ կավարտի մանևրը

Պատ.՝ 2

---

122. **Ավտոբուսի վարորդին արգելվում է վազանցը, երբ վազանցվող տրանսպորտային միջոցի վարորդը կատարում է՝**

1. Վազանց:
2. Շրջանցում է արգելքը:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

---

123. **Երթևեկությունը թույլատրվում է**



1. Միայն հակառակ ուղղությամբ:
2. Միայն ուղիղ:
3. **Միայն ուղիղ ու հակառակ ուղղություններով:**

Պատ.՝ 3

---

124. **Եթե դուք վարում եք ավտոբուս, կարո՞ղ եք սկսել վազանցի կատարումը:**



1. Այո
2. **Ոչ**
3. Միայն նշանն անցնելուց հետո

Պատ.՝ 2

---

125. Թույլատրվու,մ է 5 տոննայից ծանր ավտոբուսի վարորդին սկսել վազանցը այս դրությունում:



1. Այո
2. Ոչ
3. **Այո, եթե համոզված է, որ մինչև 100 մետր գծանցից հեռավորությունը կավարտի մանևրի կատարումը**

Պատ.՝ 3

---

126. Պարտավո՞ր է արդյոք երթուղային ավտոբուսի վարորդն այս իրավիճակում զիջել ճանապարհը:



1. Ոչ
2. Միայն տրամվայի վարորդին
3. Միայն բեռնատարի վարորդին
4. **Այո, պարտավոր է զիջել երկու վարորդներին**

Պատ.՝ 4

---

127. Ո՞ր ուղղությամբ կարող է երթևեկել զբոսաշրջային ավտոբուսի վարորդը այս իրադրությունում:



1. Միայն ուղիղ
2. **Բոլոր ուղղություններով**

Պատ.՝ 2

---

128. Վազանցը նշված հետագծով



1. Արգելվում է:
2. Թույլատրվում է:
3. թույլատրվում է միայն ընդհանուր օգտագործման ավտոբուսների վարորդներին:

Պատ.՝ 1

---

129. Բնակավայրում միևնույն ուղղությամբ երթևեկության 2 գոտիների առկայության դեպքում ձախ եզրային գոտի զբաղեցնել թույլատրվու՞մ է արդյոք ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին:

1. Թույլատրվում է վազանց կատարելիս
2. Թույլատրվում է ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելիս
3. Թույլատրվում է բոլոր դեպքերում

Պատ.՝ 3

---

130. Թույլատրվու՞մ է ավտոբուսի վարորդին բնակավայրից դուրս նշված հետագծով վազանցել բեռնատար ավտոմոբիլներին:



1. Թույլատրվում է
2. Թույլատրվում է, եթե բեռնատար ավտոմոբիլների արագությունը 30 կմ/ժ-ից պակաս է
3. Չի թույլատրվում

Պատ.՝ 3

---


131. Թույլատրվու՞մ է վազանց կատարել թունելում:

1. Թույլատրվում է
2. Թույլատրվում է միայն արհեստական լուսավորության առկայության դեպքում
3. Արգելվում է

Պատ.՝ 3

---

132. Ո՞ր տրանսպորտային միջոցներին է թույլատրվում երթևեկել ուղիղ:



1. **Միայն բեռնատար ավտոմոբիլին**
2. Թեթև մարդատար և բեռնատար ավտոմոբիլներին
3. Բեռնատար ավտոմոբիլին և ավտոբուսին
4. Բոլոր տրանսպորտային միջոցներին

Պատ.՝ 1

---

133. Դուք վարում եք երթուղային տրանսպորտային միջոց և տվյալ իրավիճակում մտադիր եք կատարել ձախ շրջադարձ: Խաչմերուկը կանցնեք



1. Առաջինը:
2. Երկրորդը:
3. **Երրորդը:**

Պատ.՝ 3

---

134. **Դուք վարում եք ավտոբուս: Լուսացույցի դեղին թարթող ազդանշանի առկայությամբ պարտավոր ե՞ք ճանապարհը զիջել տրամվային:**




1. Պարտավոր եք, քանի որ ցանկացած խաչմերուկում տրամվայն ունի առավելություն ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների նկատմամբ
2. **Պարտավոր չեք, քանի որ տրամվայը գտնվում է երկրորդական ճանապարհի վրա**

Պատ.՝ 2

---

135. **Պարտավո՞ր է ավտոբուսի վարորդը ճանապարհը զիջել մոտոցիկլին:**




1. Պարտավոր չէ, քանի որ ավտոբուսն ունի մեծ եզրաչափեր, որն առավելություն է տալիս մոտոցիկլի նկատմամբ
2. **Պարտավոր է**

Պատ.՝ 2

---

136. **Կարո՞ղ է տրամվայը խաչմերուկը անցնել առաջինը կանաչ ավտոմոբիլի հետ միաժամանակ:**



1. **Կարող է**
2. Չի կարող, տրամվայը պարտավոր է ճանապարհը զիջել դեղին ավտոմոբիլին

Պատ.՝ 1